

ԵՊՀ-ի Սնկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի գիտական խումբը (ՄԿԿԽ) հիմնադրվել է 1993թ. կենսաբանության ֆակուլտետում: 2005թ.-ին այն վերանվանվել Սնկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի լաբորատորիա (ՄԿԿԼ), իսկ 2022թ.-ից՝ միավորվել ԵՊՀ Կենսաբանության ինստիտուտի հետ:

ՄԿԿԼ-ի գիտական հետաքրքրությունները հիմնականում ուղղված են մակրոսկոպիկ սնկերի, մասնավորապես դեղասնկերի՝ որպես կենսաակտիվ միացությունների և ֆերմենտների բնական աղբյուրի, կենսաբանական առանձնահատկությունների ուսումնասիրմանը, կենսատեխնոլոգիական և կենսաբժշկական ներուժի բացահայտմանը սնկային ծագման կենսատեխարտադրանքներ ստանալու նպատակով:

Լաբորատորիայում իրականացվում են միցելիումի մորֆո-էկոլոգիական առանձնահատկությունների, քիմիական կազմի և դեղաբանական (հակասնկային, հակաբակտերիալ, հակավիրուսային, հակաքաղցկեղային, միտոզեն/ռեգեներացնող, իմունախթանիչ, հակաօքսիդիչ, թրոմբոլիտիկ/ֆիբրինոլիտիկ և այլն) հատկությունների ուսումնասիրություններ:

Առաջին անգամ Հայաստանում հիմնադրված ԵՊՀ-ի Սնկային կուլտուրաների հավաքածուն, որը նպաստում է սնկերի մոլեկուլային կարգաբանության, ֆիլոգենիայի, կենսաբանության և կենսատեխնոլոգիայի ժամանակակից գիտա-կիրառական հետազոտությունների իրականացմանը: Հավաքածուն ներառում է մոտ 180 տեսակի 580 շտամներ, որոնցից 55 տեսակի 320 շտամներ՝ դեղասնկեր են, մոտ 40 տեսակի 220 շտամներ՝ զենետիկորեն նույնականացված: Կուլտուրաները անջատվել են Հայաստանի, Ռուսաստանի, Իտալիայի, Իրանի և Գերմանիայի տարածքներից, ինչպես նաև ստացվել Եվրոպական և Ամերիկյան համալսարաններից ու գիտական կենտրոններից: *Տարբեր սնկային կուլտուրաների միցելիումի կառուցվածքային առանձնահատկությունները* (ԵՊՀ հրատ., 2017) մենագրությունը ներառում է կուլտուրաների ցանկ, կատալոգ և միցելիալ միկրոկառուցվածքների հեղինակային ատլաս: Հավաքածուի առկայությունը նպաստում է նաև ԵՊՀ-ում սնկադեղաբանության և կենսաբժշկագիտության զարգացմանը:

Լաբորատորիայում գիտական հետազոտությունները իրականացվում են մի շարք արտասահմանյան (Թենեսիի, Գյոթինգենի, Յենայի, Բոլոնիայի, Ուրբինոյի, Լ'Աքիլայի, Մոնպելյեի, Հայֆայի, Ուրալի ֆեդերալ և Մոսկվայի պետական) համալսարանների հետ ակտիվ համագործակցության շրջանակներում: Դրանք ուղղված են ազարիկոմիցետային, մասնավորապես կոպրինային, ազարիկային և պոլիպորային սնկերի ֆիլոգենիայի, կենսաբանական առանձնահատկությունների, կենսացիկլի անսեռ փուլի՝ անամորֆի, կենսատեխնոլոգիական ներուժի և դեղաբանական հատկությունների ուսումնասիրմանը: Մոլեկուլային մեթոդներով Հայաստանի տարածքում առաջին անգամ նկարագրվել են մակրոմիցետների 14 նոր տեսակներ (*Coprinopsis strossmayeri*, *Coprinellus radians*, *Fomes inzengae*, *Ganoderma adpersum*, *Tuber rufum*, *Tuber scruposum*, *Tuber rapaeodorum*, *Elaphomyces muricatus*, *Hydnотria tulasnei*, *Tirmania pinoyi*, *Hymenogaster griseus*, *H. olivaceus*, *Picoa juniperi*, *Glomus macrocarpum*): Վերլուծվել է Հայաստանի տարածքում նկարագրված Agaricomycetes սնկերի մոտ 850 տեսակի (Polyporales, Hymenochaetales, Agaricales) ժամանակակից կարգաբանությունը, որոնցից մոտ 80-ը՝ օժտված են պոտենցիալ դեղաբանական հատկություններով: Նրանց ցուցակագրման, ռեսուրսային և կենսատեխնոլոգիական ներուժի գնահատման աշխատանքները ընթացքի մեջ են:

Իրականացվում են Իրանի Մազանդարանի շրջանի մակրոմիցետների կենսաբազմազանության և դեղաբանական հատկությունների համատեղ ուսումնասիրություններ:

Հայաստանի պայուսակավոր (հիպոգիալ) և կերատինոֆիլ (գեոֆիլ) սնկերի կենսաբազմազանության ուսումնասիրությունները իրականացվել են Բոլոնիայի համալսարանի և Փարիզի Բնության պատմության ազգային թանգարանի հետ համատեղ: Առաջին անգամ Հայաստանի տարբեր հողերից անջատվել է մարդու և կենդանիների պոտենցիալ պաթոգեն կերատինոֆիլ սնկերի հավաքածու:

Միջազգային համագործակցության արդյունքները հրապարակվել են ավելի քան 130 աշխատություններում, ներառյալ գրախոսվող հոդվածներ, գրքեր, գրքերի գլուխներ և զեկուցվել տարբեր երկրներում (Գերմանիա, Իսպանիա, Իտալիա, Ճապոնիա, Չինաստան, ԱՄՆ, Կանադա, Նիդեռլանդներ, Ֆրանսիա, Հնդկաստան, Նորվեգիա, Հարավային Աֆրիկա, Ավստրալիա և այլն) կայացած ավելի քան 80 միջազգային գիտաժողովներում:

Մնկաբանության ժամանակակից հիմնարար խնդիրներին են նվիրված ազարիկոմիցետային սնկերի կենսացիկլի, կենսաակտիվ միացությունների կենսասինթեզի գենետիկական մեխանիզմների, դեղաբանական հատկությունների և կենսատեխնոլոգիական կիրառման հեռանկարների վերաբերյալ *Springer* և *CRC press* հրատարակչությունների կողմից տպագրված գրքերը:

ՄԿԿԼ-ի գիտական հետազոտությունները աջակցվել են հայկական և միջազգային դրամաշնորհներով (ՆԱՏՕ, ԴԱԱԴ, ՄԳՏԿ, ՀՀՌՀ և այլն): Լաբորատորիայի աշխատանքներում ներգրավված են երիտասարդ մասնագետներ, մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողներ: